ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-**423**[1]-23.12.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
<<ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. <<Պետական և ծառայողական գաղտնիքի մասին>> Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-94 օրենքի (այսուհետ՝ օրենք) 9-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր <<է>> կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

<<է) <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, այդ թվում՝ տրանսպորտի տեխնիկական սպասարկման և նորոգման, արարողակարգային, այդ թվում՝ պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների նպատակով միջոցառումների սպասարկման համար օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում պետության կողմից անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի մասին>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության դիտողությունների և առաջարկությունների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1. ՀՀ կառավարություն	Նախագծի առաջին հոդվածում «արարողակարգային» բառից հետո հանել «ծախսերի» բառը, իսկ «ձեռքբերման» բառից հետո ավելացնել «գործընթացի բառը»:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն: